ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԱՎԱՐՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր 14.03.2013թ.

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Վանաձորի մասնաճյուղը /այսուհետ՝ Համալսարան/, ի դեմս ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Արմեն Խառատյանի և Լոռու «Մարզպետարան»-ը /այսուհետ՝ Կազմակերպություն/, ի դեմս մարզպետ Արթուր Նալբանդյանի, կնքեցին սույն պայմանագիրը/ այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Համալսարանը պարտավորվում է "Համակարգչային գեղարվեստական նախագծում" (071800) մասնագիտությամբ սովորող ուսանողներին /այսուհետ Ուսանողներ/ ուղարկել Կազմակերպություն՝ ուսումնական պլանի և տարեկան ուսումնական պլանի համաձայն արտադրական և նախաավարտական պրակտիկան /այսուհետ՝ Պրակտիկա/ անցկացնելու համար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ընդունել Ուսանողներին համաձայն Համալսարանի նամակի և կազմակերպել Պրակտիկայի անցկացումը:

1.2 Պրակտիկայի անցկացման ժամկետներն են՝ յուրաքանչյուր կիսամյակ /1-ին կիսամյակ՝ հունվարից մինչև փետրվար՝ 3 շաբաթ և 2-րդ կիսամյակ՝ հուլիսից մինչև օգոստոս՝ 4 շաբաթ/:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.1.1. Անցկացնել համալսարանի ուսանողների Պրակտիկան 1.2 կետում նշված ժամկետներում:

2.1.2. Կազմակերպության կողմից Պրակտիկայի ղեկավարման համար նշանակել համապատասխան որակավորմամբ մասնագետների:

2.1.3. Համալսարանին մինչև Պրակտիկայի ավարտը տրամադրել տեղեկություններ Պրակտիկայի ղեկավարի մասին (անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն), հրամանի (այլ փաստաթղթի) պատճենը, որի հիման վրա նա ղեկավարում է Ուսանողների Պրակտիկան:

2.1.4. Ապահովել Համալսարանի պրակտիկայի ղեկավարի մշակած և համաձայնեցված պլանի կատարումը Կազմակերպության Պրակտիկայի ղեկավարի կողմից՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:

2.1.5.Ուսանողներին հնարավորություն տալ ծանոթանալու և օգտվելու հաստատության փաստաթղթերից, գրադարանից, այլ անհրաժեշտ ծառայություններից՝ պայմանով, եթե դրանք ստորագրվել են Կազմակերպության գաղտնիքի չհրապարակման մասին համապատասխան համաձայնագիր:

2.1.6. Ուսանողներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի և հաստատության ներքին կարգապահական կանոններին, ապահովելով աշխատանքի անվտանգ պայմաններ:

2.1.7. Ապահովել Ուսանողների հաճախումների հսկողությունը և գրանցումը:

2.1.8. Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր Ուսանողին տալ բնութագիր և նրա կազմած հաշվետվության գնահատականը:

2.2. Համալսարանը պարտավորվում է՝

2.2.1. Պրակտիկայի ղեկավարման համար նշանակել բարձր որակավորում ունեցող մասնագետների:

2.2.2. Կազմակերպությանը ներկայացնել ուսանողների ցուցակ պարունակող համապատասխան նամակ: Մեկ կիսամյակի համար ցուցակում ներառված ուսանողների առավելագույն քանակը չպետք է գերազանցի 8 հոգին:

2.2.3. Ապահովել Համալսարանի Պրակտիկայի ղեկավարի կողմից Պրակտիկայի թեմատիկ պլանի և Պրակտիկայի անցկացման կարգի մշակումը և համաձայնեցումը Կազմակերպության Պրակտիկայի ղեկավարի հետ:

2.2.4.Մինչ Պրակտիկան սկսելը, մեկ ամիս առաջ Կազմակերպությանը ներկայացնել համապատասխան հայտ՝ կցելով ուսանողների ցուցակը, ծանոթացնել նրանց Պրակտիկայի հանձնարարականներին, ծրագրերին:

2.2.5. Ապահովել Ուսանողների հաճախումները և պրակտիկայի վայրում նրանց ներկայությունը՝ ըստ սահմանված կարգի:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ լուծարել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5/հինգ/ օր առաջ ծանուցելով Համալսարանին,

2.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել առանձին Ուսանողի Պրակտիկան կազմակերպելուց, եթե վերջինս.

2.3.2.1. Խախտում է Կազմակերպության ներքին կարգապահության, անվտանգության և /կամ էթիկայի կանոնները,

2.3.2.2. Հրապարակել է կամ այլ կերպ երրորդ անձանց հասու է դարձրել Կազմակերպության գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կամ ստեղծել է նման հրապարակման վտանգ,

2.3.2.3. Վնաս է պատճառում Կազմակերպության գույքին,

2.3.2.4. Թույլ է տալիս Կազմակերպության կողմից սահմանված Պրակտիկայի ռեժիմի ավելի քան 5/հինգ/ խախտում:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1.Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Կողմերի միջև ծագած բոլոր տարաձայնությունները կախված Պայմանագրի հետ լուծվում է կողմերի միջև բանակցությունների միջոցով:

3.3. Կողմերի միջև ծագած բոլոր տարաձայնությունները բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում դրանք ենթական են լուծման դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4. Այլ դրույթներ

4.1.Պայմանգիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը:

4.2.Պայմանագրով ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3.Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

4.4.Պայմանագրի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

4.5.Պայմանագիրը կազմված է 2/ երկու/ հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

5. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Վանաձորի մասնաճյուղ	Լոռու «Մարզպետարան»
ք. Վանաձոր, Շինարարների 12	ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
տնօրեն՝ ԱՐՄԵՆ ԽԼՈՒՍՏՅԱՆ	մարզպետ՝ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
---	---